




ՀՏՏ

**ԱՂՋԻԿՆԵՐԻ  
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ  
ՖՈՒՏԲՈԼԻ  
ՄՐՅՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
Մրցաշրջան 2021-2022**



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	6
Հոդված 1. Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները.....	6
Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները.....	6
Հոդված 3. ՀՖՖ գործառույթները .....	7
Հոդված 4. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները.....	7
Հոդված 5. Մրցումներին մասնակցության չափանիշները և մասնակցության համար դիմելու կարգը.....	8
Հոդված 6. Պարգևատրումը.....	8
ԳԼՈՒԽ 2. ՄՐՅՈՒՄՆԵՐԻ ԱՆՅԿԱՅՈՒՄԸ.....	<b>Error! Bookmark not defined.</b>
Հոդված 7. Մրցումների վայրը.....	9
Հոդված 8. Մրցումների տարիքային խմբերը, անցկացման կարգը.....	9
Հոդված 9. Խաղացանկերը և անցկացման ժամկետները.....	10
Հոդված 10. Խաղի անցկացման կարգը .....	10
Հոդված 11. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը .....	11
Հոդված 12. Չկայացած և անավարտ խաղերը .....	12
Հոդված 13. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը .....	14
ԳԼՈՒԽ 3. ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ.....	15
Հոդված 14. Սպասարկող անձնակազմի նշանակումը և սպասարկման իրականացումը.....	15
Հոդված 15. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները.....	15
ԳԼՈՒԽ 4. ԴԱՇՏԻ ՏԵՐ ԹԻՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	15
Հոդված 16. Դաշտի տեր թիմի պարտականությունները.....	15
ԳԼՈՒԽ 5. ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	16
Հոդված 17. Նախախաղային խորհրդակցությունը.....	16
ԳԼՈՒԽ 6. ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ.....	16
Հոդված 18. Մրցումների մասնակիցների հայտավորումը և վերահայտավորումը.....	16
ԳԼՈՒԽ 7. ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ.....	17
Հոդված 19. Տուտբոլիստների և թիմի անձնակազմերի մասնակցությունը .....	17
Հոդված 20. Խաղի արձանագրությունը.....	17
Հոդված 21. Փոխարինումները.....	19
ԳԼՈՒԽ 8. ՄԱՐԶԱՀԱԳՈՒՄԸ.....	19
Հոդված 22. Խաղահամարները.....	19
ԳԼՈՒԽ 9. ԵԶՐԱՓՁԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	20
Հոդված 23. Այլ հարցեր .....	20

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

<b>ՀՖՖ</b>	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
<b>ՖԻՖԱ</b>	Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա
<b>ՈԻԵՖԱ</b>	Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն
<b>ԻՖԱԲ</b>	Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային խորհուրդ
<b>Ակումբ</b>	Մարզական առումով ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի կանոնակարգերին և սահմանված կիրառելի և վերաբերելի նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցումներին
<b>Ակումբի պաշտոնյա</b>	Ակումբի աշխատակից, բացառությամբ ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների, ով ֆուտբոլային ակումբի հետ գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ և/կամ ներառված է ակումբի իրավական խմբի կառուցվածքում և/կամ գրանցված է ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում՝ որպես ակումբի պաշտոնյա
<b>Առաջնություն</b>	Տվյալ մրցաշրջանի աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի ակումբների միջև անցկացվող ՀՀ ֆուտբոլի առաջնություն:
<b>Արտակարգ իրավիճակ/ Ֆորս-մաժոր</b>	Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի և կազմակերպչի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնաժին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են ֆուտբոլային

	հանդիպման՝ պատշաճ և ըստ նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացման
<b>Թիմի անձնակազմ</b>	Ակումբի աշխատակիցներ, այդ թվում՝ մարզչական, տեխնիկական և ղեկավար անձնակազմի անդամներ, ովքեր հայտավորված են՝ ՀՖՖ-ի աղջիկների մանկապատանեկան մրցումներին մասնակցելու նպատակով
<b>Խաղացանկ</b>	Խաղային օրերի ժամանակացույց
<b>Խաղաշրջան</b>	Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով մեկնարկող և վերջին պաշտոնական խաղով ավարտվող ժամանակաշրջան
<b>Խաղի ժամանակահատված</b>	Խաղասկզբից 2 ժամ առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից 1 ժամ հետո ընկած ժամանակահատված
<b>Խաղի կանոններ</b>	«Ֆուտբոլ խաղի» գործող կանոններ՝ ըստ ԻՖԱԲ-ի
<b>Կանոնակարգ</b>	ՀՖՖ աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգ (2021-2022 մրցաշրջան)
<b>Համապատասխանելիության հավաստագիր</b>	«ՀՖՖ ենթակառուցվածքային կանոնակարգի» չափանիշների համաձայն՝ ՀՖՖ-ի կողմից տրվող համապատասխան փաստաթուղթ
<b>Հանդիպման (խաղի) կազմակերպիչ</b>	Դաշտի տեր ակումբ, որն ապահովում է ֆուտբոլային հանդիպման կազմակերպման և անցկացման աշխատանքները
<b>Հանդիպման (խաղի) մասնակից</b>	Ֆուտբոլիստ, թիմի անձնակազմ, ֆուտբոլային հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար
<b>Հյուր թիմ</b>	Հակառակորդի՝ հանդիպման կազմակերպչի դաշտում խաղին մասնակցող թիմ
<b>ՀՖՖ Գործադիր կոմիտե</b>	ՀՖՖ-ի կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման մարմին
<b>ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժին</b>	Հանդիպման մրցավարներին և տեսուչին նշանակող մարմին
<b>ՀՖՖ նույնականացման քարտի համար (ID)</b>	Ֆուտբոլային օբյեկտների և սուբյեկտների անհատական համար, որը տրվում է Ֆուտբոլի կառավարման համակարգում

	գրանցվելիս
<b>ՀՖՖ պաշտոնյա</b>	ՀՖՖ-ի լիազորված հաստիքային աշխատակից, պատվիրակ, տեսուչ, հանձնակատար, կոմիտեի անդամ, հանձնաժողովների և ՀՖՖ-ի այլ իրավասու մարմինների անդամ
<b>Մարզադաշտ</b>	ՀՖՖ-ի կողմից համապատասխանելիության հավաստագիր ստացած մարզական շինություն, որտեղ անցկացվում է ֆուտբոլային հանդիպումը
<b>Մրցաշրջան</b>	Ժամանակաշրջան, որը մեկնարկում է օրացուցային տվյալ տարվա հունիսի 1- ին և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին
<b>Մրցավար</b>	Խաղի ՀՖՖ-ի կողմից նշանակված մրցավար
<b>Մրցավարի օգնական</b>	Խաղի մրցավարի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված օգնական
<b>Մրցումներ</b>	ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր
<b>Ֆուտբոլային սուբյեկտներ</b>	Աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձինք

## ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 1. Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները

- 1.1 Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մրցումների կազմակերպման և անցկացման սկզբունքները, ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և այլ ընթացակարգային հարցերը տվյալ մրցումների ընթացքում, կարգավորում է մանկապատանեկան ֆուտբոլի, մրցումներին մասնակցող ակումբների իրավունքներն ու պարտականությունները:
- 1.2 Կանոնակարգի խնդիրներն են՝
- ա) մրցումների կազմակերպման, անցկացման, դեկլարման և հսկողության ընթացակարգերի սահմանումը,
  - բ) մրցումների մասնակիցների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովումը,
  - գ) մրցումների համակարգի համապատասխանեցումը ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջներին:

### Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները

#### 2.1 Մրցումների նպատակն է՝

- ա) ՀՀ տարածքում աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի հետագա զարգացմանը նպաստելը:
- բ) Վաղ տարիքից ֆուտբոլիստների մասնագիտական որակների և ուսուցման պրոցեսի մակարդակի հետագա բարձրացմանը նպաստելը:
- գ) Ազգաբնակչության մանկապատանեկան հասակի աղջիկների համակողմանի ֆիզիկական զարգացման ապահովումը:
- դ) Հեռանկարային, խոստումնալից, տաղանդավոր ֆուտբոլիստներին ի հայտ բերելուն:
- ե) Մանկապատանեկան, ազգային հավաքական թիմերի ձևավորմանը (Մ-14 տ. Ազգային հավաքականի ստեղծում) նպաստելը:
- զ) Բարձրագույն և Առաջին խմբերի թիմերի համալրման համար արժանի հերթափոխի պատրաստման գործընթացին նպաստելը:

#### 2.2 Մրցումների խնդիրներն են՝

- ա) տարիքային խմբերի առաջնությունում թիմերի դասակարգումը՝ ըստ առաջնության արդյունքների,
- բ) ի հայտ բերել Մ-10, Մ-12 և Մ-14 տարիքային խմբերի մրցանակակիրներին:

---

### **Հոդված 3. ՀՖՖ գործառույթները**

---

3.1 ՀՖՖ-ն իրականացնում է մրցումների ընդհանուր ղեկավարումը, մասնավորապես՝

- ա) հաստատում է մրցումների անցկացման կանոնակարգը և խաղացանկերը,
- բ) իրականացնում է թիմերի, դրանց ֆուտբոլիստների և թիմերի անձնակազմերի հայտավորումը,
- գ) հաստատում է մրցումները սպասարկող մրցավարների կազմերը,
- դ) կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց նկատմամբ հսկողությունը,
- ե) ամփոփում է հանդիպումների արդյունքները,
- զ) հաստատում է առաջնությունների արդյունքները և իրականացնում է մրցանակակիրների պարգևատրումը,
- է) իրականացնում է մրցումների կազմակերպումից բխող այլ գործառույթներ:
- ը) հոգում տարիքային առաջնության անցկացման համար անհրաժեշտ բոլոր ֆինանսական ծախսերը (տրանսպորտ, մարզագույք, մարզահագուստ, մարզչի աշխատավարձ):

---

### **Հոդված 4. Մրցաշրջանի ընթացքում սկումբների պարտականությունները**

---

4.1 Ակումբները պատասխանատու են՝

- ա) խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի՝ խաղին մասնակցելու իրավասության առկայության համար (խաղի արձանագրությունում նշված լինելը համարվում է խաղին մասնակցություն),
- բ) սկումբում գրանցված (հայտավորված) ֆուտբոլիստների առողջական վիճակի համար,
- գ) որակագրկված ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների խաղին մասնակցելու համար,
- դ) խաղի ժամանակահատվածում և դրանից հետո իրենց ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների, պաշտոնյաների, ինչպես նաև երկրպագուների, ոչ սպորտային վարքագծի և անվայել գործողությունների համար,
- ե) մարզադաշտում գտնվող շինությունների, հանդերձարանների և այլ գույքի պատշաճ օգտագործման և դրանց՝ մինչև օգտագործումն առկա վիճակի պահպանման համար,
- զ) ՀՖՖ-ին ոչ հավաստի տեղեկություն պաշտոնապես ներկայացնելու համար:

4.2 Ակումբներին արգելվում է՝

- ա) միջամտել խաղը սպասարկող անձնակազմի գործողություններին, այն է՝ կատարել այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտում է կամ կարող է խոչընդոտել խաղը սպասարկող անձնակազմի բնականոն գործունեությանը կամ կարող է ազդել խաղի ընթացքի կամ ելքի վրա,
- բ) ներկայացնել ՀՖՖ-ն կամ օգտագործել ՀՖՖ-ի դրոշը և խորհրդանշանը (տարբերանշան)՝ բացառությամբ ՀՖՖ-ի կողմից տրված գրավոր թույլտվության առկայության դեպքերի,

զ) մրցումների շրջանակներում և հրապարակային գործողություններ կատարելիս օգտագործել ակումբի այնպիսի անվանում կամ խորհրդանշան (տարբերանշան) (այդ թվում՝ կոմերցիոն գործընկերոջ անվանում), որը ՀՖՖ-ում գրանցված չէ տվյալ ակումբի անվամբ:

---

#### **Հոդված 5. Մրցումներին մասնակցության չափանիշները և մասնակցության համար դիմելու կարգը**

---

5.1 Մրցումներին կարող են մասնակցել այն ակումբները, որոնք ընդունում են ՀՖՖ Կանոնադրությունը և պարտավորվում են կատարել դրա, ինչպես նաև սույն Կանոնակարգի պահանջները:

5.2 Թիմերը ներկայացնող Ակումբները հաստատում են իրենց թիմի (թիմերի) մասնակցությունը մրցումներին՝ մինչև 2021թ. հոկտեմբերի 4-ը ՀՖՖ ներկայացնելով սահմանված կարգի «Հավաստագիր», որտեղ պետք է նշել թիմի անվանումը, առաջնությանը մասնակցող տարիքային խումբը, մարզադաշտը, որտեղ անցկացնելու են տնային հանդիպումները:

5.3 Առաջնություններին մասնակցելու համար մուտքավճար չի պահանջվում:

5.4 Սույն կանոնակարգի դրույթների խախտումների համար պատասխանատվությունը կրում է ներկայացնող ակումբը:

---

#### **Հոդված 6. Պարգևատրումը**

---

6.1 Մ-14 և Մ-12 տարիքային խմբի մարզային առաջնություններում առաջին տեղ գրաված թիմը պարգևատրվում է գավաթով:

6.2 Հանրապետական փուլի Մ-14 տ. և Մ-12 տ. հաղթողները պարգևատրվում են գավաթներով և ոսկե մեդալներով: Երկրորդ տեղ գրաված թիմերը պարգևատրվում են արծաթե մեդալներով:

6.3 Մ-10 տարիքային խմբերի բոլոր մասնակից թիմերը կպարգևատրվեն միանման մեդալներով:

6.4 Տարիքային խմբերի առաջնություններում լավագույն ռմբարկու/ներ/ ճանաչվում է/են/ առաջնությունում մրցակցի դարպասը առավելագույն անգամ գրաված ֆուտբոլիստը/ները/ և պարգևատրվում «ոսկե խաղակոշիկ» մրցանակով:

Մրցումների մասնակիցների համար ՀՖՖ կանանց և ֆուտզալի կոմիտեի որոշմամբ կարող են սահմանվել այլ պարգևատրումներ:



### Հոդված 7. Մրցումների վայրը

7.1 Մրցումների մասնակից ակումբը մրցակցին ընդունում է «Մասնակցության հավաստագրում» նշված մարզադաշտում: Մարզադաշտի ընդունումն իրականացնում է ՀՖՖ-ն և թույլատրում կամ արգելում է առաջնության հանդիպումների անցկացումը:

7.2 Յուրաքանչյուր խաղի համար տվյալ մարզադաշտի պատրաստ լինելը որոշում է խաղի մրցավարը:

7.3 Խաղի օրն առաջացած արտակարգ իրավիճակների/ֆորս-մաժորի, ինչպես նաև տվյալ հանդիպմանը մարզադաշտի՝ ցանկացած այլ պատճառով պատրաստ չլինելու դեպքում, հանդիպման մրցավարը կայացնում է վերջնական որոշում խաղը տվյալ մարզադաշտում անցկացնելու կամ հետաձգելու վերաբերյալ՝ նախապես խորհրդակցելով ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ:

### Հոդված 8. Մրցումների տարիքային խմբերը, անցկացման կարգը

8.1 Մրցումները անցկացվում են հետևյալ տարիքային խմբերով՝

- **Մինչև 14 տարեկանների առաջնություն (2007-2008-2009թթ. ծնվ.)**
- **Մինչև 12 տարեկանների առաջնություն (2010-2011-2012թթ. ծնվ.)**
- **Մինչև 10 տարեկանների առաջնություն (2012-2013-2014թթ. ծնվ.)**

8.2 Մ-10 և Մ-14 տարիքային խմբերում մրցումներն անցկացվում են Արարատի, Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի (Վարդենիսի շրջան), Կոտայքի, Արմավիրի մարզերում և Երևանում, իսկ մինչև 12 տարեկանների խմբի առաջնությունը Հայաստանի բոլոր մարզերում:

8.3 Մրցաշարերն անցկացվում են առանձին խմբերով շրջանաձև մրցակարգով: Առաջնության մեկնարկի համար յուրաքանչյուր տարիքային խմբում պետք է ընդգրկված լինի առնվազն 4 թիմ: Մրցաշարի ավարտից հետո կանցկացվի հանրապետական փուլ՝ Երևանում, որին կմասնացեն բոլոր մասնակից թիմերի լավագույն խաղացողները՝ ըստ մարզերի և տարիքային խմբերի:

8.4 Աղջիկների մանկապատանեկան առաջնությունն անցկացվում են փոքրացված խաղադաշտերում՝

- **Մինչև 14 տարեկանների խումբ.** Խաղադաշտի չափսերը՝ երկարություն՝ /75-90մ./, լայնություն՝ /60-65մ./, տուգանային հրապարակ՝ 16.50մ: Խաղի ձևաչափը՝ 11v11:
- **Մինչև 12 տարեկանների խումբ.** Խաղադաշտի չափսերը՝ երկարություն՝ /45-65մ./, լայնություն՝ /30-40մ./, դարպասի չափսեր՝ լայնություն՝ /5մ./ բարձրություն՝ /2մ./, տուգանային հրապարակը՝ 9մ: 11 մետրանոց նշակետը փոխարինել 7 մետրանոց նշակետով: Խաղի ձևաչափը՝ 8v8:
- **Մինչև 10 տարեկանների խումբ.** Խաղադաշտի չափսերը՝ երկարություն՝ /35-40մ./, լայնություն՝ /20-25մ./, դարպասի չափսեր՝ լայնություն՝ /3մ./ բարձրություն՝ /2մ./,

տուգանային հրապարակ՝ 9մ: 11 մետրանոց նշակետը փոխարինել 7 մետրանոց նշակետով: Խաղի ձևաչափը՝ 5v5 (առանց դարպասապահ):

8.5 Բոլոր տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումներն անցկացվում են N 4 գնդակով:

8.6 Խաղերի ժամանակ դարպասացանցերը պարտադիր են:

---

## **Հոդված 9. Խաղացանկերը և անցկացման ժամկետները**

---

9.1 Առաջնություններն անցկացվում են 2021 թվականի հոկտեմբերից և 2022 թվականի հունիս ամիսը ներառյալ: Բոլոր տարիքային խմբերի առաջնությունների առաջին մասի անցկացման ժամկետներ են՝ 14.10.2021թ. – 14.11.2021թ.:

9.2 Միննույն թիմի մասնակցությամբ երկու պաշտոնական խաղերի միջև ընկած ժամանակահատվածը պետք է լինի առնվազն 72 ժամ:

9.3 Մրցումների խաղացանկերը հաստատվում են ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավարի կողմից և դրանք տրամադրվում են ակումբներին ոչ ուշ, քան մրցումները սկսելուց 5 օր առաջ:

9.4 Հաստատված խաղացանկում փոփոխությունները կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքում ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտի որոշմամբ՝ տվյալ խաղին մրցող ակումբների գրությունների հիման վրա: Յուրաքանչյուր դեպքում վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտը՝ ելնելով փոփոխության նպատակահարմարությունից:

9.5 Մրցաշրջանի ընթացքում հաստատված խաղացանկով խաղի օրվա/ժամի փոփոխության նպատակով ակումբները պետք է տվյալ խաղից առնվազն 2 օր առաջ գրավոր կերպով դիմեն ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտ՝ նշելով փոփոխության համար հիմք հանդիսացող պատճառները: Խաղի օրվա/ժամի տեղափոխման նպատակահարմարության վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտը, որի մասին ակումբը ծանուցվում է իր էլեկտրոնային հասցեով:

9.6 Խաղացանկերը կազմվում են ըստ ընդունված Բերգերի համակարգի:

9.7 Թիմերի մեկնարկային դիրքը մրցաշարային աղյուսակում որոշվում է վիճակահանությամբ: Վիճակահանությունը կազմակերպվում է ՀՖՖ-ի ֆուտբոլի դեպարտամենտի կողմից և անցկացվում է խաղաշրջանը սկսելուց առնվազն 6 օր առաջ:

---

## **Հոդված 10. Խաղի անցկացման կարգը**

---

10.1 Սույն կանոնակարգով սահմանված մանկապատանեկան մրցումների շրջանակներում հանդիպումներն անցկացվում են՝ համաձայն ԻՖՄԲ «Ֆուտբոլ խաղի» կանոնների և սույն կանոնակարգի:

10.2 Մ-12 և Մ-14 տ. խմբերի առաջնություններում տուգանային, ազատ և անկյունային հարվածների ժամանակ մրցակից թիմի ֆուտբոլիստները պետք է գտնվեն գնդակից նվազագույնը 5մ. հեռավորության վրա:

10.3 «Խաղից դուրս» վիճակը գործում է միայն դարպասային գծին զուգահեռ և դարպասային գծից 12մ. հեռավորության վրա սահմանված տարածքում՝ իսկ Մ-10 և Մ-12 տարիքային խմբի մրցաշարում՝ «խաղից դուրս» վիճակը չի գործում:

10.4 Հետադարձ փոխարինում թույլատրվում է Մ-10 տարիքային խմբերում:

10.5 Խաղերի տևողությունը՝

- Մ-14 - 60 րոպե (30 + 30), մինչև 15 րոպե ընդմիջումով,
- Մ-12 – 40 րոպե (20 + 20), մինչև 15 րոպե ընդմիջումով,
- Մ-10 – 20 րոպե (20 + 20), մինչև 10 րոպե ընդմիջումով,

Խաղերի սպասարկումն իրականացնում են ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժնի կողմից նշանակված մրցավարները:

---

## **Հոդված 11. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը**

---

11.1 Մ-12 և Մ-14 տ. խմբում թիմերը մրցաշարային աղյուսակում դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Յուրաքանչյուր խաղում հաղթանակի համար թիմին շնորհվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, իսկ պարտության դեպքում միավոր չի շնորհվում: Մ-10 տ. խմբի առաջնության խաղերի ժամանակ մրցաշարային աղյուսակ չի կազմվում, հանդիպումների գույերը և արդյունքները չեն արձանագրվում:

Մրցաշարային աղյուսակում երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունը ըստ ստորև նշված հերթականության, տրվում է այն թիմին, որը՝

- ա) հավակնորդ թիմերի միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,
- բ) հավակնորդ թիմերի միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
- գ) հավակնորդ թիմերի միջև խաղերում խփել է ավելի շատ գոլ,
- դ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,
- ե) տվյալ Առաջնության բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
- զ) տվյալ առաջնությունում ունի ավելի քիչ կարմիր քարտ,
- է) տվյալ առաջնությունում ունի ավելի քիչ դեղին քարտ,
- ը) ընտրվել է վիճակահանությամբ:

11.2 Եթե ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից տվյալ առաջնությունից հեռացված թիմը մասնակցել է 50% կամ պակաս խաղերի, ապա այդ խաղերի արդյունքները չեղյալ են համարվում, և տվյալ թիմի ու մրցակից թիմերի կողմից այդ խաղերի ընթացքում վաստակած միավորները, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը զրոյացվում են՝ բացառությամբ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված որակագրկումների: Եթե թիմը մասնակցել է տվյալ առաջնության 50%-ից ավել խաղերի,

ապա դրանց արդյունքները մնում են ուժի մեջ և տվյալ թիմը զրկվում է չեմպիոն դառնալու հնարավորությունից: Այն թիմերի օգտին, որոնք տվյալ առաջնության մնացած հատվածում հանդիպելու էին հեռացված թիմի հետ, մնացած բոլոր խաղերում գրանցվում է տեխնիկական հաղթանակ 3:0 հաշվով:

---

## **Հոդված 12. Չկայացած և անավարտ խաղերը**

---

12.1 Չկայացած կամ անավարտ են համարվում այն խաղերը, որոնք համապատասխանաբար, չեն կայացել կամ ընդհատվել են և չեն շարունակվել հետևյալ պատճառներով՝

- ա) եղանակային անբարենպաստ պայմաններ,
- բ) ֆորս-մաժորային իրավիճակ,
- գ) թիմի կողմից խաղադաշտի լքում,
- ե) երրորդ անձանց միջամտություն, որն էականորեն խոչընդոտում կամ անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա:
- զ) թիմի ֆուտբոլիստի, անձնակազմի անդամի, պաշտոնյայի և/կամ երկրպագուի անկարգապահ վարքագիծ, որը անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,
- է) հասարակական կարգի այնպիսի խախտում, որը անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,
- ը) թիմի կազմում 7-ից պակաս ֆուտբոլիստների առկայություն,
- թ) անկանխատեսելի հանգամանք, որն անհնար է դարձնում խաղի, մեկնարկը, դրա ընթացքը և/կամ շարունակությունը կամ ազդում է խաղի արդյունքի վրա:

12.2 Խաղը չկայացած կամ անավարտ համարելու մասին որոշումը կայացնում է խաղի մրցավարը:

12.3 Եթե խաղը չի կայացել, ընդհատվել, կամ չի շարունակվել սույն հոդվածի ա և բ կետերի համաձայն, ապա այն խաղացվում կամ շարունակվում է մեկ այլ օր նույն մարզադաշտում խաղի ընդհատման բոպեին հաջորդող բոպեից: Տեղափոխված հանդիպման անցկացման վայրը մնում է անփոփոխ: Եթե որոշակի հանգամանքներով պայմանավորված հնարավոր չէ խաղն անցկացնել նախանշված վայրում, ապա ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը պետք է հանդիպումը վերանշանակի մեկ այլ խաղադաշտում:

12.4 Եթե մրցավարը որոշել է կանգնեցնել խաղը, ապա մնացած խաղաժամանակը պետք է անցկացվի հետևյալ պայմաններում՝

- ա) Խաղի արձանագրությունում պետք է լինեն միայն այն խաղացողները և թիմերի անձնակազմերի անդամները, որոնք հանդիպման դադարեցման պահին գտնվել են խաղադաշտում և/կամ պահեստայինների նստարանին: Բացառություն են կազմում այն խաղացողները և թիմերի անձնակազմերի անդամները, որոնք մինչ հանդիպման դադարեցման պահը փոխարինվել են կամ հեռացվել: Հանդիպման դադարեցման պահին խաղադաշտում գտնված խաղացողները չպետք է նշվեն արձանագրության մեջ, որպես պահեստային խաղացող, երբ հանդիպումը վերսկսվի:

- բ) Բոլոր կարգապահական տույժերն ու պատժամիջոցները, որոնք եղել են մինչ հանդիպման դադարեցումը, մնում են անփոփոխ:
- գ) Բոլոր զգուշացումները, որոնք տրվել են մինչ հանդիպման դադարեցումը, չեն հաշվարկվում դեղին քարտերի հաշվարկում, քանի դեռ հանդիպումն ամբողջությամբ չի ավարտվել:
- դ) Մինչ խաղի դադարեցումը հեռացված ֆուտբոլիստ(ներ)ը չեն կարող փոխարինվել մնացած խաղաժամանակում, և մեկնարկային կազմի խաղացողների քանակը մնում է անփոփոխ, որքան կազմում էր մինչ խաղի դադարեցվելը:

12.5 Եթե անավարտ խաղին մասնակցած ֆուտբոլիստ(ներ)ը՝ առողջական խնդիրների պատճառով չի/չեն կարող մասնակցել խաղի շարունակությանը, իսկ թիմի՝ փոխարինումներ կատարելու հնարավորությունները սպառվել են, ապա ֆուտբոլիստ(ներ)ը կարող է/են փոխարինվել տվյալ խաղի արձանագրությունում նշված այն ֆուտբոլիստ(ներ)ով, որը (որոնք) ընդհատված խաղին չի/չեն մասնակցել: Եթե տվյալ խաղի արձանագրությունում պահեստային ֆուտբոլիստներ չկան, ապա տվյալ թիմը խաղին մասնակցում է առողջական խնդիրների պատճառով խաղի շարունակությանը մասնակցել չկարողացած ֆուտբոլիստների թվին հավասար պակաս թվով ֆուտբոլիստներով:

12.6 Սույն հոդվածի 12.1 մասի «գ»-ից «թ» կետերով ամրագրված հիմքերով խաղն ընդհատվելու պարագայում այն չի շարունակվում, և չկայանալու պարագայում՝ չի վերախաղարկվում:

12.7 Սույն հոդվածի 12.1 մասի «դ»-ից «թ» կետերով ամրագրված հիմքերով խաղն ընդհատվելու կամ չկայանալու դեպքում մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0-3 հաշվով, իսկ մրցակցին՝ տեխնիկական հաղթանակ 3-0 հաշվով: Եթե խաղն ընդհատվել կամ չի կայացել երկու թիմերի մեղավորության կամ դիտավորության պատճառով, ապա երկու թիմերին գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0-3 հաշվով: ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեն իրավասու է սահմանել այլ պատժամիջոցներ ՀՖՖ Կարգապահական և Էթիկային կանոնակարգի շրջանակներում:

12.8 Եթե խաղի արդյունքը չեղյալ է համարվել, ապա խաղի ընթացքում գրանցված գոլերը ուժարկունների հաշվարկում չեն ներառվում, իսկ կարգապահական բոլոր տույժերը, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը մնում են ուժի մեջ:

12.9 Չկայացած կամ անավարտ խաղերը, որտեղ որևէ թիմի հաշվին գրանցվել է տեխնիկական պարտություն, չեն կարող հաշվարկվել, որպես որակագրկումը մարելու միջոց:

12.10 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և ակումբի պաշտոնյաների որակագրկումները գործում են մինչև վերջիններիս կողմից բաց թողնվելիք խաղի, իսկ մեկից ավել խաղերի պարագայում՝ մինչև վերջին խաղի ավարտը ներառյալ: Որակագրկված ֆուտբոլիստը, թիմի անձնակազմի անդամը կամ պաշտոնյան իրավունք ունի մասնակցելու տվյալ խաղին, եթե բաց թողնվելիք վերջին խաղը տվյալ խաղի մեկնարկից առնվազն 60 րոպե առաջ ամբողջությամբ ավարտվել է:

12.11 Անավարտ կամ չկայացած խաղի ընդհատվելու կամ չկայանալու պատճառը, ժամանակը և հաշիվը գրանցվում են տվյալ խաղի արձանագրության մեջ և մրցավարի զեկույցում:

12.12 Սույն հոդվածի 12.1 մասում նշված որևէ հիմքով ընդհատված, սակայն 30 րոպեի ընթացքում վերսկսած և բնականոն ընթացքով շարունակված խաղը անավարտ խաղ չի համարվում: Այդ խաղը վերսկսվում է ընդհատման րոպեին հաջորդող րոպեից, և խաղի շարունակության ժամանակ գործում են այն բոլոր կարգավորումները և կանոնները, որոնք կգործեն չընդհատված խաղի դեպքում: Այդ խաղի արձանագրությունում նշում է կատարվում խաղի ընդհատման պատճառի, ընդհատման և վերսկսման ժամերի, ինչպես նաև մրցավարի կողմից կարևոր համարվող այլ հանգամանքների մասին:

---

**Հոդված 13. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը**

---

13.1 Մասնակից թիմերը պարտավոր են ժամանել մարզադաշտ խաղի նշանակված ժամից նվազագույնը 60 րոպե առաջ:

13.2. Անհարգելի պատճառով խաղին չներկայանալու, ինչպես նաև ժամանակին մարզադաշտը չտրամադրելու կամ անպատրաստ տրամադրելու դեպքում, խաղը համարվում է չկայացած: Մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն:

13.3 Թիմը համարվում է խաղին չներկայացած, եթե մրցավարին չի տեղեկացրել ուշացման պատճառների մասին և խաղասկզբին չի ներկայացել: Տեղեկացնելու դեպքում խաղասկիզբը կարող է հետաձգվել առավելագույնը ոչ ավելի քան մեկ խաղակես, որի մասին որոշումը կայացնում է խաղի մրցավարը՝ խորհրդակցելով ՀՖՖ Կանանց ֆուտբոլի բաժնի հետ:

13.4. Անհարգելի պատճառով խաղին չներկայանալու դեպքում թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

13.5 Երեք տեխնիկական պարտության դեպքում՝ թիմը հանվում է առաջնությունից:

13.6 Սույն կանոնակարգի դրույթները պարբերաբար խախտելու, ՀՖՖ-ի որոշումները չկատարելու և իր գործողություններով կամ անգործությամբ ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հիմնարար սկզբունքները ոտնահարելու դեպքում թիմը ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշմամբ ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով կարող է հեռացվել տվյալ առաջնությունից:

### ԳԼՈՒԽ 3. ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

#### Հոդված 14. Սպասարկող անձնակազմի նշանակումը և սպասարկման իրականացումը

14.1 Հանդիպումը սպասարկող մրցավարական անձնակազմը նշանակվում է ՀՖՖ-ի մրցավարական և տեսչական բաժնի կողմից հետևյալ կազմով՝ Մ-14 առաջնության խաղերին՝ մրցավար և մրցավարի երկու օգնական, Մ-12 և Մ-10 տ. խաղերին՝ 1 մրցավար:

#### Հոդված 15. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները

15.1 Խաղը չկայանալու կամ ուշ սկսելու որոշումը պատկանում է խաղի մրցավարին, որի վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում խաղի արձանագրությունում:

15.2 Մրցավարները խաղասկզբից առաջ պետք է ստուգեն թիմերի մեկնարկային կազմերի ֆուտբոլիստների, ինչպես նաև խաղի ընթացքում փոխարինող ֆուտբոլիստների ինքնությունը:

15.3 Հանդիպման մրցավարը պարտավոր է տվյալ խաղի արձանագրությունը ներկայացնել ՀՖՖ՝ խաղին հաջորդող աշխատանքային օրը մինչ ժամը՝ 12:00-ն:

15.4 Խաղային ժամանակահատվածում ունեցած արտակարգ միջադեպերի մասին խաղը սպասարկող մրցավարը պարտավոր է զեկուցագիր ներկայացնել ՀՖՖ՝ խաղին հաջորդող աշխատանքային օրը մինչ ժամը՝ 12:00-ն:

### ԳԼՈՒԽ 4. ԴԱՇՏԻ ՏԵՐ ԹԻՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Հոդված 16. Դաշտի տեր թիմի պարտականությունները

16.1 Թույլատրվում է անվտանգությունն ապահովել սեփական ուժերով:

16.2 Խաղը սպասարկող խմբին տրամադրել սենյակ՝ նախախաղային խորհրդակցություն անցկացնելու համար:

16.3 Նախապատրաստել խաղադաշտը հանդիպմանը:

16.4 Հանդիպման անցկացման համար ապահովել առնվազն երեք գնդակի առկայությունը:

## ԳԼՈՒԽ 5. ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### Հոդված 17. Նախախաղային խորհրդակցությունը

17.1 Յուրաքանչյուր խաղից առնվազն 45 րոպե առաջ հանդիպման մրցավարը անցկացնում է նախախաղային խորհրդակցություն մրցող թիմերի մարզիչների, մրցավարական անձնակազմի մասնակցությամբ: Խորհրդակցության ընթացքում ճշտվում են խաղի անցկացման պայմաններն ու տրվում համապատասխան հրահանգները մասնակիցներին:

## ԳԼՈՒԽ 6. ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ

### Հոդված 18. Մրցումների մասնակիցների հայտավորումը և վերահայտավորումը

18.1 Հայտավորվել կամ /վերահայտավորվել/ կարող են այն ֆուտբոլիստները, որոնք գրանցված են թիմը ներկայացնող ակումբում:

18.2 Ֆուտբոլիստը իրավունք ունի հանդես գալ այն թիմի կազմում, որտեղ նա հայտավորված է տվյալ պահին:

18.3 Ֆուտբոլիստների հայտավորման համար լրացվում է ՀՖՖ-ի կողմից սահմանված ձևաթուղթը: Պարտադիր լրացման ենթակա են՝

- ակումբի (թիմը ներկայացնող կազմակերպության) անունը: Անունը պետք է համընկնի ձևաթղթի դրոշմակնիքի վրա նշված անվան հետ,
- թիմի անունը,
- հայտավորվող թիմի անձնակազմի անդամների ցուցակը (առաջին մասում). լրացվում է ՀՖՖ-ում մուտքագրված անձնական համարը, ազգանունը, անունը, անձի պաշտոնը և հեռախոսահամարը,
- հայտավորվող ֆուտբոլիստների ցուցակը (երկրորդ մասում). լրացվում է ՀՖՖ-ում մուտքագրված անձնական համարը, ազգանունը, անունը, ծննդյան օրը, ամիսը տարեթիվը,
- Ակումբի ղեկավարի հաստատումը. լրացվում է ղեկավարի ազգանունը, ստորագրությունը՝ կնքված կազմակերպության կնիքով, ՀՖՖ հայտավորման/վերահայտավորման ներկայացման ամսաթիվը:
- Անձնական համար չունենալու դեպքում հայտավորման թերթիկի հետ 12 տարին չլրացած ֆուտբոլիստների համար ներկայացվում է՝ Քաղաքացիական անձնագիրը, դրա երկրորդ և երրորդ էջերի պատճեն, անձնագիր չլինելու դեպքում՝
  - ✓ ծննդյան վկայականի պատճենը,
  - ✓ տեղեկանք հանրակրթական դպրոցից, որտեղ պետք է փակցված լինի աշակերտի գունավոր նկարը, նշված լինի ազգանունը, անունը, հայրանունը ծննդյան օրը, ամիսը, տարին: Տեղեկանքը ստորագրվում և կնքվում է տնօրենի կողմից: Կնիքը պետք է դրվի նկարի վրա,
  - ✓ նույն լուսանկարը զետեղված ՀՖՖ-ի կողմից պետք է տեղադրվի սահմանված ձևի վրա:



18.4 Մրցումներին մասնակից թիմերի հայտավորման ժամկետը սկսվում է պաշտոնական առաջին խաղից 10 օր առաջ և ավարտվում է 1 օր առաջ:

18.5 Մ-14 տարեկանների յուրաքանչյուր թիմում թույլատրվում է հայտավորել նվազագույնը՝ 16, առավելագույնը՝ 25 ֆուտբոլիստ և մինչև 5 պաշտոնյա /մարզչական կազմ, բժիշկ /բուժակ/, ադմինիստրատոր/:

Մ-12 տարեկանների յուրաքանչյուր թիմում թույլատրվում է հայտավորել նվազագույնը՝ 12, առավելագույնը՝ 22 ֆուտբոլիստ և մինչև 5 պաշտոնյա /մարզչական կազմ, բժիշկ /բուժակ/, ադմինիստրատոր/:

Մ-10 տարեկանների յուրաքանչյուր թիմում թույլատրվում է հայտավորել նվազագույնը՝ 10, առավելագույնը՝ 15 ֆուտբոլիստ և մինչև 5 պաշտոնյա /մարզչական կազմ, բժիշկ /բուժակ/, ադմինիստրատոր/:

## ԳԼՈՒԽ 7. ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

### Հոդված 19. Ֆուտբոլիստների և թիմի անձնակազմերի մասնակցությունը

19.1 Ֆուտբոլիստները մրցումներին մասնակցում են ֆուտբոլիստի ՀՖՖ նույնականացման քարտով, իսկ բացառիկ դեպքերում՝ քաղաքացիական անձնագրով:

19.2 Թիմի անձնակազմի անդամները խաղին մասնակցում են ՀՖՖ նույնականացման քարտի հիման վրա:

19.3 Եթե խաղին ներկա չէ թիմերի անձնակազմերից թեկուզ մեկական անդամ, ապա խաղը չի անցկացվում: Եթե խաղի ընթացքում կարգապահական խախտման պատճառով թիմը մնացել է առանց թիմի անձնակազմի անդամի (հեռացվել է խաղադաշտից), ապա խաղը չի շարունակվում, որի համար մրցավարը համապատասխան գրառում է կատարում խաղի արձանագրությունում:

### Հոդված 20. Խաղի արձանագրությունը

20.1 Յուրաքանչյուր խաղ պետք է ունենա արձանագրություն:

20.2 Արձանագրության առաջին մասը կազմվում է խաղին մասնակցող ակումբների կողմից: Կետերի: Յուրաքանչյուր ակումբ արձանագրությունում նշում է խաղին մասնակցող հիմնական և փոխարինող (պահեստային) ֆուտբոլիստներին և նրանց մարզաշապիկի համարները, ինչպես նաև թիմի անձնակազմի անդամներին:

20.3 Արձանագրության մեջ կարող են նշվել միայն այն ֆուտբոլիստները և թիմի անձնակազմի այն անդամները, ովքեր հայտավորված են և որակագրված չեն՝ տվյալ խաղին մասնակցելու համար: Չհայտավորված և որակագրված ֆուտբոլիստների խաղին մասնակցության պատասխանատվությունը կրում է տվյալ ակումբը:

20.4 Ակումբների և մրցավարի կողմից կազմված արձանագրությունները միացվում են և համարվում են խաղի մեկ միասնական արձանագրություն:

20.5 Բոլոր տարիքային խմբերի առաջնություններում մրցող թիմերի ներկայացուցիչները խաղասկզբից ոչ ուշ, քան 40 րոպե առաջ մրցավարական անձնակազմին են հանձնում խաղի արձանագրության իրենց կողմից լրացված հատվածը: Արձանագրությանը կից հանձնվում են նաև դրանում նշված ֆուտբոլիստների և անձնակազմի անդամների ՀՖՖ նույնականացման քարտերը: Ֆուտբոլիստների և անձնակազմի անդամների ՀՖՖ նույնականացման քարտերը խաղից հետո վերադարձվում են ակումբի/թիմի ներկայացուցիչներին:

20.6 Խաղին կարող են մասնակցել միայն խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստներն ու թիմերի անձնակազմի անդամները:

20.7 Մ-14 տ. տարիքային խմբերի առաջնությունների խաղերի արձանագրության մեջ լրացվում է նվազագույնը՝ 15, առավելագույնը՝ 23 ֆուտբոլիստ /11 հիմնական և 12 պահեստային/:

20.8 Մ-12 տ. խմբերի առաջնությունների խաղերի արձանագրության մեջ լրացվում է նվազագույնը՝ 12, առավելագույնը 16 ֆուտբոլիստ /8 հիմնական և 4-8 պահեստային/:

20.9 Մ-10 տ. խմբերի առաջնությունների խաղերի արձանագրության մեջ լրացվում է նվազագույնը՝ 8 ֆուտբոլիստ, առավելագույնը 10 ֆուտբոլիստ /5 հիմնական և 3-5 պահեստային/:

20.10 Խաղի արձանագրությունում լրացվում է մինչև 5 պաշտոնյա:

20.11 Ակումբների ներկայացուցիչները պատասխանատու են արձանագրությունում ընդգրկված ֆուտբոլիստների մասնակցության փաստաթղթերի իսկության համար:

20.12 Հանդիպման ընթացքում կամ ավարտից հետո հանդիպմանը մասնակցած (արձանագրությունում լրացված) ֆուտբոլիստների ինքնության վերաբերյալ մրցակիցների մոտ կասկած առաջանալու դեպքում, մրցակից թիմի մարզիչը (անձնակազմի անդամը) պարտավոր է այդ մասին հանդիպման ավարտից հետո կես ժամվա ընթացքում հայտնել խաղի մրցավարին առաջացած կասկածի վերաբերյալ և լրացնի այդ մասին խաղի արձանագրությունում:

Արձանագրությունում պետք է նշվի ինքնության վերաբերյալ կասկած հարուցած ֆուտբոլիստի վերնաշապիկի համարը, նրա անուն-ազգանունը՝ ըստ խաղի արձանագրության, կասկածի բնույթի մասին շարադրանքը, դիմում ներկայացնողի անուն-ազգանունը, պաշտոնը, ինչպես նաև ստորագրությունը և դիմումի ներկայացման ժամը:

Ֆուտբոլիստների ինքնության ստուգման վերաբերյալ դիմում ստանալու դեպքում խաղը սպասարկող անձնակազմը պարտավոր է կազմակերպել և իրականացնել ստուգման հետևյալ գործառույթները՝

- ա) արձանագրությունում նշված ֆուտբոլիստը (ֆուտբոլիստները) իր մարզչի հետ հրավիրվում է մրցավարական սենյակ, որտեղ խաղը սպասարկած մրցավարական խմբի անդամների և դիմում ներկայացրած անձի ներկայությամբ համեմատություն է կատարվում ֆուտբոլիստի (ֆուտբոլիստների) և նրա վերաբերյալ ներկայացված խաղի մասնակցելության փաստաթղթի հետ,

բ) ստուգման արդյունքները ձևակերպվում է արձանագրությունում, որի տակ ստորագրում են մրցավարական անձնակազմը, երկու թիմերի մարզիչները: Կազմված արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում նշված անձինք կարող են դրանք գրավոր կերպով ներառել արձանագրության մեջ:

Այն դիմումները, որոնք չեն համապատասխանի վերը նշված դրույթներին քննության առարկա չեն դառնա:

---

### **Հոդված 21. Փոխարինումները**

---

21.1 Մ-14 տարիքային խմբի առաջնությունների հանդիպումներում արձանագրության մեջ լրացված ֆուտբոլիստներից 6, այդ թվում նաև դարպասապահը, ենթակա են պարտադիր փոխարինման: Հիմնական կազմի և պարտադիր փոխարինման ենթակա յուրաքանչյուր ֆուտբոլիստ պետք է ստանա նվազագույնը 10 րոպե խաղային ժամանակահատված:

21.2 Մ-12 տարիքային խմբի առաջնությունների հանդիպումներում արձանագրության մեջ լրացված բոլոր ֆուտբոլիստները, այդ թվում նաև դարպասապահը, ենթակա են պարտադիր փոխարինման:

21.3 Մ-10 տարիքային խմբի առաջնությունների հանդիպումներում արձանագրության մեջ լրացված բոլոր ֆուտբոլիստները ենթակա են պարտադիր փոխարինման:

21.4 Մ-12 և Մ-14 տարիքային խմբերում երկրորդ դարպասապահ չլինելու դեպքում թիմի հիմնական դարպասապահը պարտադիր պետք է փոխարինվի այլ դիրքի խաղացողով:

## **ԳԼՈՒԽ 8. ՄԱՐԶԱՆԱԳՈՒՄՏԸ**

---

### **Հոդված 22. Խաղահամարները**

---

22.1 Թիմերի մարզահագուստի մեջքի հատվածի կենտրոնական մասում պարտադիր պետք է փակցված լինեն ֆուտբոլիստների խաղահամարները: Խաղահամարները թույլատրվում է նաև փակցնել մարզահագուստի դիմացի մասում:

22.2 Ֆուտբոլիստների խաղահամարները պետք է լինեն 1-ից մինչև 99-ի միջակայքում: Կարող են օգտագործվել միայն ամբողջական թվեր: 1-ին համարը պետք է գրանցված լինի թիմի դարպասապահի անվամբ:

**Հոդված 23. Այլ հարցեր**

23.1 Սույն կանոնակարգի դրույթ(ներ)ի խախտումը կամ չկատարումը առաջացնում է պատժամիջոցներ և/կամ տուգանքներ՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կանոնակարգի:

23.2 Առանձին դեպքերում, երբ խախտվել է կանոնակարգի դրույթ/ներ/ը, ակումբը կամ ակումբի որևէ պաշտոնյա իրավունք ունի ներկայացնելու բացատրագիր՝ մանրամասն նշելով հիմնավոր պատճառները, ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:

23.3 Սույն կանոնակարգով չնախատեսված դեպքերում և արտակարգ իրավիճակներում վերջնական որոշումը կայացվում է ՀՖՖ-ի կողմից:

23.4 Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից և գործում է մինչև 2021-2022 մրցաշրջանի ավարտը: